



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 27 ՆՈՅԵՄԲԵՐ, 2023

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, փուր ինձ իմաստութիւն կրարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 51

### ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.

քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:

Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ:

Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքէս չելլեր:

Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր, գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:

ուստի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես. իրաւացի ես, ինչ պատիժ ալ սահմանես:

Արդարեւ, անօրէն եմ ծնունդէս ի վեր, մեղաւոր եմ մօրս յղութեան պահէն սկսեալ:

Մակայն դուն, Տէր, որովհետեւ մարդուս սրտին մէջ ճշմարտութիւնը կ'ուզես տեսնել,

ծածուկ կերպով իմաստութիւնդ յայտնեցիր ինձի:

Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,

լուս զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:

Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,

եւ փառապաճ ոսկորներս պիտի ցնծան:

Նկատի մի առնէր մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:

Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,

նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:

Ներկայութենէդ մի գրկեր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չքէ զիս:

Փրկութեանդ ցնծութիւնը փուր ինձի,

եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:

Որպէսզի անօրէններուն սորվեցնես քու կամքդ, եւ մեղաւորները քեզի դառնան:

Այս արեան պարտքէն փրկէ զիս, Աստուած, Աստուած, փրկիչս,

եւ լեզուս ցնծութեամբ արդարութիւնդ պիտի երգէ:

Բաց իմ շրթներս, ով Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:

Եթէ գոհ կամենայիր՝ պիտի մաքուրեցնէի, բայց ողջակէզ դուն չես ուզեր:

Ուզած գոհդ զոջումով լի հոգի մըն է, ով Աստուած,

հետեւաբար մի մերժեր զոջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

Բարեհաճ եղիր Սիոնի հանդէպ, որպէսզի Երուսաղէմի պարիսպները վերաշինուին:

Այն արեան պիտի ընդունիս քաւութեան մեր զոհերը,

ուխտի նուէրներն ու ողջակէզները, եւ քու գոհասեղանիդ դրուած մաքղաշ ցուլերը:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,

աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



**ՆԵՐՈՒԲԱԻ ԽՆԴՐԱՆՔ 7-13**

Նախքան Սաղմոսին շարունակությունը, պահ մը անդրադառնանք այն երեւոյթին, որ մի գուցէ ոմանց համար փարօրինակ թուի, երբ կը կարդանք այն հատուածը որ կ'ըսէ. «Անօրէն եմ ծնունդէս ի վեր, մեղաւոր եմ մօրս յղութեան պահէն սկսեալ»: Այս հատուածը մտածել կու տայ քանի մը կէտեր:

1. Աղանական մեղքի ժառանգությունը: Երբ կը կարդանք Ծննդոց 5-րդ գլուխը ուր կը ներկայացնէ Ադամէն ծնածը, կ'ըսէ. «Եւ Ադամին իր պարկերին համաձայն մարդ մը ծնաւ»: Ուրեմն, այլեւս, Աստուծոյ պարկերին համաձայն չէ, որովհետեւ մեղանշումէն յետոյ, աստուածային պարկերն ու նմանությունը կորսնցուց մարդը: Չմոռնանք, պարկեր եւ նմանություն նաեւ կը նշանակէ նկարագիր, այսինքն՝ Ադամին նկարագրով: Ուրեմն մեղքը կը փոխանցուի սերունդէ սերունդ:
2. Եթէ մեղքը կը փոխանցուի սերունդէ սերունդ, ապա, աւելի լաւ է գաւակներ չծնանալի:
3. Ահա ճիշդ այս երեւոյթին համար է, որ Աստուած աշխարհ դրկեց Իր միածին Որդին, որպէսզի՝ Պօղոս Առաքեալի բացատրութեամբ, եթէ առաջին Ադամով մեղքը ժառանգեցինք, ապա երկրորդ Ադամով՝ Քրիստոսով Կեանքը ժառանգելու համար: Ահա թէ ինչու է մկրտութեան խորհուրդը: Երբ մանաւանդ՝ կը շեշտուի չուշացնելու այդ խորհուրդին կատարումը: Չսպասելու մինչեւ երեխան մեծնայ եւ յետոյ ինք որոշէ: Յիշենք Եգիպտոսէն ելքը, Աստուած առաջնորդեց զիրենք դուրս բերելու Եգիպտոսէն: Նախ մոռթուեցաւ Գառնուկը, անոր արիւնը սրսկուեցաւ դռներուն վրայ իբրեւ նշան: Որմէ ետք ճաշակեցին այդ Գառնուկը, ապա ճամբայ ելան երթալու դէպի խոստացուած երկիր: Անցան Կարմիր ծովը, մտան անապարհ: Ընդհանրութեամբ, որոնք երեխաներ ունէին, ի՞նչ ըրին, թողեցին իրենց գաւակներ Եգիպտոս, ըսելով դուք մեծցէք, եւ դուք որոշում առէք կուգէք դուրս գալ կամ ոչ: Կարմիր ծովու անցքը ինչպէս փեղի ունեցաւ: Ով գիտէ, ինչպիսի բացատրություններ ալ տրուին:

Ուրեմն, որքան ալ մեղքով ծնաւ զիս մայրս, սակայն Աստուած պարտաւորեց փրկութեան ծրագիր մը, անով վերադարձնելու համար մարդը, այն մարդը որ այնքան սիրեց ու փակաւին կը սիրէ, այն մարդը, որուն Դաւիթ կը դիմէ ըսելով. «Ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ, լուս զիս, եւ ձիւնէն աւելի ճերմակ պիտի ըլլամ»: Հերաքրքրական է, որ այսպէղ Ներումիդ ցօղով սրբէ զիս, արտայայտությունը բառացի «զիս գոպայով ցօղէ»: Զոպան այն փշուր փունկն է, որուն ճիւղերը կը գործածէին ծիսական մաքրութեան սահմանուած արարողութեանց ընթացքին, զոհերուն արիւնին մէջ թաթխելով մարդոց վրայ սրսկելու Ղեւրացւոց 14:4: Այս բոլորը նախապարկերուցումն էր գալիք այն զոհի արիւնին, որ Քրիստոսի արիւնը պիտի ըլլար սրսկելու մեղաւոր մարդուն եւ անով մաքրելու անոր մեղքը եւ ձիւնէն աւելի ճերմակ ու մաքուր ընելու: Ասով վերստին ունենալու ցնծությունն ու ուրախությունը, այն ինչ մեղքի պարճառով ոչ միայն կորսնցուցած էր Դաւիթ, այլ մինչեւ իսկ ոսկորները կը փառապէին: Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած Իր երեսը դարձնէ ոչ թէ իրմէ, այլ՝ մեղքէն եւ ներում շնորհէ:

Խնդրանքը կը շարունակուի, «Մաքուր սիրտ մը հաստատել մէջս, ով Աստուած»: Աստուածաշունչ Մատթեանին մէջ երբ կը հանդիպինք սիրտ արտայայտութեան, կը նշանակէ մարդու խորհուրդները, «հոն ուր որ գանձն է, հոն է մարդու սիրտը», անոր մտածումները, խորհուրդները: Այս փեղ Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած մաքրէ եւ մաքուր խորհուրդներ հաստատէ: Նաեւ Քրիստոսի բացատրութեամբ, «Երանի սրտով մաքուրներուն, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»: Ուրեմն, Դաւիթի խնդրանքը ոչ թէ միայն մաքուր խորհուրդներ ունենալն է պարզապէս, այլ որպէսզի այդ մաքուր խորհուրդներով կարենայ զԱստուած տեսնել, եւ չզրկուի անկէ: Կը շարունակէ, «Ներկայութենէդ մի գրկեր զիս Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չքէ զիս» Քրիստոսի բացատրութեամբ, արտաքին խաւար վիճակն է, որուն չուզեր Դաւիթ երնթարկուիլ, երբ կ'ըսէ. «Ներկայութենէդ մի գրկեր զիս Տէր», Տիրոջ ներկայութենէն դուրս մնալ, կը նշանակէ խաւարի մէջ ըլլալ: Այսպէղ նաեւ կայ ակնարկությունը Սուրբ Հոգիին, Սուրբ Հոգիդ թող չքէ զիս: Որովհետեւ նոյն Սուրբ Հոգին է, որ զԱստուած իբրեւ Աբբա Հայր կոչել կու տայ, կը ճանչցնէ, ուրեմն Սուրբ Հոգին որ լքէ զինք, այլ խօսքով այդ կապը պիտի կորսուի: Կը խնդրէ, որ փրկութեան այդ ուրախությունը դարձեալ տրուի իրեն, եւ Աստուծոյ կամքին հնազանդ հոգի: Ահա այս բոլորի պարճառը հնազանդութեան խնդրին է, երբ մեր ցանկությունները մեր մէջ կ'արթննայ, խորքին մէջ ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ պարտաւորանին նկատմամբ անհնազանդություն: Ընել կամ չընելը, ուրեւ կամ չուրելը, երթալ կամ չերթալը, խորքին մէջ Աստուծոյ պարտաւորանին զանցարումն է: Որուն օրինակը Քրիստոս փրկուի Իր փորձութեան ժամանակ: Ոչ ըսելու չարին: Եւ ահա իր օրնակով սորվեցնելու անօրէններուն եւ մեղաւորները Աստուծոյ դառնալու: